Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 13-ին ժամը 15^{00} –ին կայացած նիստի

Արձանագրություն N 5

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի գործունեության մասին /2009թ. մարտ-սեպտեմբեր/։

2. Հաշմանդամների համար մատչելի պայմաններ ապահովելու գործընթացի մասին։

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ

Գևորգ Պետրոսյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ

Հանձնաժողովի անդամներ՝

Մանուկ Մկրտչյան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

Արմեն Ալավերդյան՝ "Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության "ՈՒՆիսոն" հ/կ նախագահ

Սուսաննա Թադեւոսյան՝ "Հույսի կամուրջ" հաշմանդամ երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանություն" հ/կ նախագահ

Լևոն Ներսիսյան՝ " Աստղիկ" հաշմանդամ երեխաների ծնողների ասոցիացիա" հ/կ նախագահ

Ջեմմա Բաղդասարյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հացերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների եւ տարեցների հիմնահարցերի վարչության պետ

/հանձնաժողովի քարտուղար/

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամներին փոխարինող անձինք՝

Քնար Ղոնյան՝ ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչ, նախարարի առաջին տեղակալ Հ. Դարբինյանի առաջարկով

Սվետլանա Գլեչունց՝ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ, նախարարի առաջին տեղակալ Գ. Մալխասյանի առաջարկով

Ժորա Ասատրյան՝ ՀՀ ֆինանսների նախարարության վարչության պետ, նախարարի առաջին տեղակալ Պ. Սաֆարյանի առաջարկով

Աննա Գևորգյան՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի առաջարկով

Թովմաս Մովսիսյան՝ "Հայաստանի կույրերի միավորում" հասարակական կազմակերպության փոխնախագահ, նախագահ Ա. Հակոբյանի առաջարկով

Հրավիրվածներ՝

Արա Մուրադյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական

Լերմենտ Ենգիբարյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության մեթոդական օգնության և վերլուծական բաժնի պետ

Հասմիկ Խաչատրյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Անահիտ Մարտիրոսյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի միջազգային կապերի բաժնի պետ

Հրանտ Պետրոսյան՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ճարտարապետության քաղաքականության և հատուկ

կարգավորման օբյեկտների համակարգման վարչության ճարտարապետության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Սևադա Հայրապետյան՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական տեսչության պետ

Մեսրոպ Հարությունյան՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

Ռուզաննա Զաքարյան՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության պետ

Արման Միրիջանյան՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների հիմնահարցերի և հավասար հնարավորությունների ապահովման բաժնի աշխատակիցները։

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի հերթական նիստը, նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար՝ հանձնաժողովի նախագահ Գ. Պետրոսյանը։

Ողջունելով հանձնաժողովի անդամներին՝ նախարարը կարևորեց Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի և պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների համատեղ համակարգված աշխատանքը հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ներառելու, նրանց համար հավասար հնարավորություններ ապահովելու, սոցիալական պաշտպանություն իրականացնելու գործում։

Նախարարի առաջարկությամբ հաստատվեց նիստի օրակարգը։

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ լսեցին՝ տիկին Բաղդասարյանին։

Նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ջ. Բաղդասարյանը ներկայացրեց անցած ամիսների ընթացքում հանձնաժողովի գործունեությունը, մասնավորապես՝ շրջակա միջավայրի մատչելիությունն ապահովելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները, «Հաշմանդամների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի վավերացման ուղղությամբ կատարված և այլ աշխատանքները ընթացքը։ Ինչպես նաև աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներկայացրեց առաջարկություններ /տեղեկանքը կցվում է/։

Արտահայտվեցին՝

Լ. Ներսիսյանը նշեց, որ " Աստղիկ" հաշմանդամ երեխաների ծնողների ասոցիացիա" հ/կ-ն կողմից կատարված մոնիտորինգի արդյունքում պարզվել է, որ Դիլիջանում որոշ փողոցներում կառուցված թեքահարթակները չեն համապատասխանում գործող նորմատիվներին: Նա նշեց նաև, որ Երևան քաղաքում նույն վիճակն է և խոստացավ իրենց կողմից իրականացվող մոնիտորինգի ավարտից հետո ներկայացնել այն փողոցների անվանումները, որտեղ կառուցված թեքահարթակները չեն համապատասխանում գործող նորմատիվներին:

Ս. Հայրապետյանը հայտնեց, որ նոր կառուցվող սոցիալական նշանակության շենքերում հաշմանդամների համար նախատեսվում են ֆիզիկական մատչելիության պայմաններ, իսկ կառուցված շինությունները հարմարեցվում են հնարավորության սահմաններում:

Ջ. Բաղդասարյանը տեղեկացրեց, որ ՀՀ բոլոր քաղաքային և Երևան քաղաքի թաղային համայնքների միջև հայտարարված 'Մատչելի համայնք' մրցույթում հաղթող են ճանաչվել Գյումրու և Դիլիջանի քաղաքային համայնքները:

Ս. Թադևոսյանը նշեց, որ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովների գործունեությունը ձևական բնույթ է կրում: Կրթության նախարարության կողմից շահագործման հանձնված դպրոցներում բացակայում են մատչելիության պայմանները: Ինչպես նաև անմատչելի պայմաններ են այն շենքերում, որտեղ տեղակայված են ԲՍՓ հանձնաժողովները: Նա նշեց նաև, որ Տավուշի մարզում իրականացվում է ներառական կրթության մոդելային ծրագիր:

Ռ. Զաքարյանը հայտնեց, որ մշակութային օբյեկտներում նույնպես բացակայում են ֆիզիկական մատչելիության պայմանները և առաջարկեց հանձնաժողովի անունից մշակութային օբյեկտներում մատչելի պայմաններ ստեղծելու և հաշմանդամներին մշակութային կյանք ներգրավելու նպատակով գրություն ուղարկել ՀՀ Մշակույթի նախարարություն:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ լսեցին՝ «Ունիսոն» հասարակական կազմակերպության նախագահ պարոն Ալավերդյանին: Նա նշեց, որ դրական տեղաշարժեր են արձանագրվել իրավական դաշտում, հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի հարցերում, սակայն տեղաշարժման դժվարություններ ունեցող հաշմանդամների կյանքում էական փոփոխությունները դեռևս նկատելի չեն: Պարոն Ալավերդյանն առաջարկեց Կառավարական թիվ 3 շենքի ներսում ծառայողական և հիմնական մուտքերից մինչև վերելակ հաշմանդամների համար ապահովել անարգել տեղաշարժ, ինչպես նաև ստեղծել մոնիթորինգային հանձնաժողով՝ ընդգրկելով հաշմանդամություն ունեցող անձանց, խստացնել քաղաքաշինական նորմերը չպահպանող սուբյեկտների նկատմամբ կիրառվող պատժամիջոցները: Նա նաև խնդրեց հաշմանդամների խնդիրները լուծելիս առաջնորդվել «Ոչինչ մեզ համար՝ առանց մեզ» կարգախոսով / տեղեկանքը կցվում է /:

Արտահայտվեցին՝

Ս. Թադեոսյանը նշեց, որ կան խնդիրներ քաղաքաշինական նորմերի կիրառման, հասարակական նշանակության շինությունների մատչելիության ապահովման, ձայնային

լուսակիրների տեղադրման, հասարակական տրանսպորտի հարմարեցման ուղղությամբ: Նա անդրադարձավ նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիայի վավերցման գործընթացին:

Ա. Մարտիրոսյանը հայտնեց, որ ավարտվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիայի ներպետական համաձայնեցման փուլը և այժմ այն գտնվում է Սահմանադրական դատարանում:

Թ. Մովսիսյանը հայտնեց, որ խորհրդային ժամանակաշրջանում Հայաստանի կույրերի միավորումը հաշմանդամների համար կառուցում էր բնակարաններ, մշակույթի պալատներ, ուներ ուսումնա-արտադրական ձեռնարկություններ և հաշմանդամների զբաղվածության խնդիրը լուծված էր:

Գ. Պետրոսյանը նշեց, որ մեր երկրում այսօր առկա են բազմաթիվ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ, կա ֆինանսական հնարավորությունների խնդիր և հաշմանդամների խնդիրների լուծմանն ուղղված որոշ ծրագրեր տնտեսական ճգնաժամի պատճառով այսօր հնարավոր չէ իրականացնել:

Ջ. Բաղդասարյանը հայտնեց, որ հանրապետությունում յուրաքանչյուր տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հաշմանդամների միջազգային օրվան նվիրված հայտարարվում է հաշմանդամների իրավունքների պաշտպանության միամսյակ, որի նպատակն է բարձրացնել հասարակության իրազեկման մակարդակը ոլորտի հիմնախնդիրների վերաբերյալ: Միամսյակի ժամանակ անց են կացվում տարբեր բնույթի միջոցառումներ:

Որոշեցին՝

- Առաջարկել ՀՀ բոլոր մարզպետներին՝ հանձնաժողովի հաջորդ նիստին ներկայացնել տեղեկատվություն հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ինտեգրելուն ուղղված՝ տարվա ընթացքում իրենց մարզում կատարված աշխատանքների մասին:

- Ազգային հանձնաժողովի անդամները՝ ներկայացնել իրենց գերատեսչության կամ կազմակերպության կողմից իրականացված աշխատանքները:

- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ ուսումնասիրել հաշմանդամների համար ֆիզիկական մատչելիության ապահովման գործընթացին առնչվող օրենսդրությունը և տալ փորձագիտական եզրակացություն սոցիալական նշանակության շենքերի կառուցման ժամանակ տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքների մշակման փուլում հաշմանդամության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին և սոցիալական ոլորտի կազմակերպություններին ընդգրկելու հնարավորության վերաբերյալ:
- ՀՀ Կառավարության 2009 թ. օգոստոսի 13-ի թիվ 995-Ն «Հայաստանի Հանրապետության և Երևան քաղաքի ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային ռազմավարությունը և հինգ տարվա գործողությունների ծրագրիրը հաստատելու մասին» որոշման մեջ կատարել փոփոխություն, հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող

հետիոտների անվտանգ տեղաշարժվելու իրավունքը՝ դրա իրացման համար ստեղծելով միջազգային չափանիշներին համապատասխան պայմաններ, նպատակ ունենալով ապահովել ձայնային ազդանշաններ լուսակիրների վրա և մատչելի կայանատեղեր հաշմանդամների ավտոմեքենաների համար և այլն։

- Ազգային հանձնաժողովի անդամներին՝ մինչև ս.թ. նոյեմբերի 5-ը ներկայացնել առաջարկություններ հաշմանդամների իրավունքների պաշտպանության միամսյակի շրջանակում կազմակերպվող միջոցառումների վերաբերյալ։
- Ազգային հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ս.թ. դեկտեմբերի վերջին։

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար,
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ջ. Բաղդասարյան